

ՉԻՒՌՈՒՄ, 10 ՅՈՒՆԻՍԻ

Ռուսաց կառավարութեան կողմանէ մայիսի 30 ամսաթիւով հրատարակուած յայտարարական թղթին վրայօք յիշատակութիւն ըրինք լրագրոյ նախնիքաց թերթովը : Բարձրագոյն Պուռը յիշեալ յայտարարութեանը օրինաւոր, խոհեմ և վեհանախան կերպիւ պատասխան տալէն ի դատ, հրապարակաւ կը բողբէ նաև Ռուսաց զօրքին Վանուբեան իշխանութեանց մէջ մտնելուն դէմ : որ պատերազմի հրատարակութիւն մըն է, կ'ըսէ, ու օսմանեան կառավարութեանը կատարեալ իրաւունք կ'ու տայ զինուորական զօրութեամբ պատասխանել : Սակայն Բարձրագոյն Պուռը իւր չափաւորութեանը և խաղաղասիրութեանը նոր ապացոյց մը տալ ցանկալով, չուզէր իւր իրաւունքը անմիջապէս ի գործ դնել, այլ արժանաւոր և միանգամայն հանդարտ կացութեան մը մէջ մնալով, կ'ուզէ բաց ձգել բարեկամական կարգադրութեանը դռները : Ի վերայ այս ամենայնի մեծ գործունէութեամբ մը հարկաւոր եղած տեղուանքը կենդրոնացուցանելով իւր զօրքը՝ պատրաստ է միշտ դէմ դնելու, երբ որ հարկը պահանջէ, ամէն տեսակ գրգռման և տարակոյս չկայ թէ յաղթութիւնը օսմանեան զօրաց կողմը պիտի ըլլայ :

Հաւաստի բողբը Բարձրագոյն Պրան, և պատասխան ընդդէմ շրջաբերական թղթին վեհափայլ խորը ոտ կոմին :

Բարձրագոյն Պուռը այս օրերս իմացաւ ի պաշտօնէ, թէ Ռուսաց զօրքը Փրութ գետը անցնելով Սոլովիա մտան և միտք ունին Վալաքիա ևս մտնելու : Եւս գործողութիւնը տեղի ունենալով առանց գործակցութեան Բարձրագոյն Պրան իւր տէրութեան ամբողջացուցիչ մէկ մասին վրայ, ի հարկէ մեծ ցաւ և զարմացում պատճառեց իրեն : Բանդի վշտալի սրտիւ կրտեսնէ, թէ յիշեալ նահանգաց պարկէշտ և խաղաղասէր բնակիչները ենթակայ կրլան ամէն կերպ դէպքերուն զինուորական բնակութեան մը : Իժուարին է իրեն՝ համաձայնել այսպիսի յարձակում մը խաղաղասիրական յայտարարութեց և բարեկամական ապահովութեանց, զորս շատ անգամ՝ կրկնեց Բեդրոպուրի դահլիճը : Եւս առաւել դժուարին է չարմանալ այսպիսի գործողութեան մը վրայ, որ 1841ին հաստատեալ դաշնագրութե սկզբանքը բոլորովին հակառակ է :

Բարձրագոյն Պուռը այս դէպքին վրայօք իւր զգացմունքը յայտնելէն ետեւ, անհրաժեշտ պարտք կը համարէ իրեն՝ ստոյգ պատմութիւնը ընել այս տեղ քանի մը պարագայից, որոց վեհափառ Սուլթանին պաշտօնեաները զուր տեղը ջանացին վախճան մը տալ արդարասիրութեամբ և անգործութիւնը անվրդով պահելով, ինչպէս որ կը ցանկային :

Վանախօսութիւնները որ բացուեցան Սէն չիքով իշխանին հետ Սուրբ Տեղեաց խնդրոյն քանի մը դժուարութեանց վրայօք էին իսկզբան որոնք քիչ ժամանակուան մէջ կարգադրեցան առ մէկ մասնակից կողմանց հաւանութե համեմատ :

Սուլթանը հաճութիւն տու ինք, որ Ռուսաց համար յատկապէս եկեղեցի մը և հիւանդանոց մը չինուի : Եւս օտարէմ, ըսել է որ նոյն աղքատ քահանայից և ուխտաւորաց համար խնդրուած թոյլտուութիւնները ամենին չսկսեցան :

Սէն չիքով իշխանին արտաքոյ կարգի պաշտօնին յայտնի նպատակ եղած գործոյն յաջողութեամբ վախճան տրուելէն ետեւ, այս դեսպանը փութացաւ բազում թախանձանք ընդունել տալ օւրիշ խնդիր մը ևս, որուն հետեւութիւնները, (եթէ Բարձրագոյն Պուռը ընդունած ըլլար զայն) ծանր վնաս պիտի պատճառէին տէրութե օգտիցը և վեհապետական իրաւանքը որ կայսերութե զարդերը և հաստատութիւններն են :

Բարձրագոյն Պրան կողմանէ գլխաւոր տէրութեանց ըստ ժամանակին եղած պաշտօնական աղդարարութիւններէն կը տեսնուի, թէ ամենին չհրաժարի բաւական ապահովութիւններ տալու, որ կարող ըլլան փարստելու ամէն երկբայութիւնները ուսկից ծագեցան վեճերը որ կը

վերաբերին իրաւանց, հողեր արտօնութեանց և ուրիշ ապահարկութեանց, զորս կը վայելէն Յունաց քահանաները և եկեղեցիները շնորհիւ օգոստափառ Սուլթանին, որ ոչ միայն ամենին չիսորհիւր ետ առնուլ այս արտօնութեանց մէկ մասը, կամ սեղմել անոնց գործածութիւնը, որ իւր օգտակարութեամբը նուիրական բան մը եղած է, այլև իրեն փառք կը համարէ հրապարակաւ հաստատել զանոնք, և հաւատարիմ ըլլալով արդարութեան ու գթութեան սկզբանց, յատուկ ինքնագիր հրովարտակաւ մը ապահովեց նոյն արտօնութիւնները ընդդէմ ամէն կերպ վնասուց : Եւս ինքնագիր հրովարտակին, (Հաթի շէրիֆին) օրինալ՝ ամէն բարեկամ տէրութեանց յուղարկեցաւ : Եւսպէս ըլլալով դէպքը, աւելորդ բան մըն է մանրամասն բացատրութիւններով ծանրացնել այս խնդիրը : Եւսակամ կը համարիմք ցուցնել այս տեղ, թէ մէկ կողմանէ Ռուսաց դեսպանին խնդիրը թէն քանի մը փոփոխութիւններ եղան թէ բաւերուն և թէ կերպին վրայօք, բայց և այնպէս վերջապէս անընդունելի մնաց վերը բացատրուած պատճառաց համար : միւս կողմանէ յիշեալ խնդիրը առանց էական նպատակի մը կրմնար ըստ որում նոյն ինքն օգոստափառ Սուլթանը ինքնայոժար կամքը հրապարակական կերպիւ երաշխաւորութիւններ տուաւ բոլոր աշխարհի առջև : Եւս անաղարտելի գործքերը բաւականապէս ազատ կրկնուցանեն Բարձրագոյն Պուռը ի պարտաւորութենէ՝ ևս առաւել արդարացնելու զինքը ի մասին կրօնական արտօնութեանց : Հաւաստի կերպիւ մը յայտնի է թէ ինքնիշխան տէրութեան մը անկախութիւնը ոչինչ է, եթէ իւր յատկութեանց մէջ չունենայ զկարողութիւնը մերժելու, առանց անիրաւութեան, խնդիր մը որ դաշնագրութեանց դէմ է, և միանգամայն անոր ընդունելութիւնը աւելորդ պիտի ըլլար իւր յայտնի նպատակին կողմանէ, և վնասակար ու նուաստացուցիչ Բարձրագոյն Պրան :

Վերայ այս ամենայնի օսմանեան կառավարութիւնը չհրաժարի ամենին իւր բարեկամական և ինստ մտերիմ փափաքէն ոչ միայն ի կատարել մեծ ճշդութեամբ ամէն խոստումները զոր ըրած է Ռուսաց տէրութե, այլև իւր անկեղծ ընթացքին նոր ապացոյցներ տալու անոր, որոնք հակառակ չըլլան իւր վեհապետութեան նուիրական իրաւանքը և իւր տէրութեան պատուոյն և հիմնական օգտիցը :

Բարձրագոյն Պուռը պատրաստ է միշտ կրկնելու զապահովութիւնները՝ որ տրուեցան յունիս 4-16ին գրուած նամակաւ ի պատասխանի վեհափայլ Սեպրընտ կոմին յուղարկած գրութեանը, որուն ամսաթիւն էր 7-19 մայիսի : Եւս եթէ այնպիսի կարգադրութեան մը ձեռք զարնել ուզէն որ Ռուսաց կառավարութեան հաճելի ըլլայ առանց վնաս մը տալու օգոստափառ Սուլթանին նուիրական իրաւանքը, Բարձրագոյն Պուռը յոժարակամ է միշտ յուղարկելու արտաքոյ կարգի դեսպան մը ի Բեդրոպուրի, որպէսզի Ռուսաց կառավարութեան հետ խորհելով կարող ըլլան այս վախճանին հասնելու հաբքը գտնել :

Սեմափայլ Սեպրընտ կոմին նամակին մէջ յիշատակութիւն եղած է օսմանեան երկրին վրայ դիպուածական յարձակման վրայօք : Կառավարութիւնը արդէն յայտնած է թէ չկրնար ընդունել զայն : և ըստորում յիշեալ նամակը, նմանապէս Բարձրագոյն Պրան գրած պատասխանը անմիջապէս հաղորդուեցան 1841ին դաշնագրութեան ստորագրող տէրութեանց, անշուշտ անօգուտ է այս վշտալի խնդրոյն վրայօք խօսիլ :

Եւս պարագայից և այս խորհրդածութեանց զօրութեամբ վեհափառ Սուլթանին կառավարութիւնը կը յուսար թէ հիմաւոր պատճառները զորս անդադար յառաջ բերաւ իւր հաւանութիւնը չտալուն համար, անկարելիութիւն որուն մէջ կը գտնուի իւր հաճութիւնը տալու, և մտերիմ բաղձանքը զոր քանի անգամ յայտնեց որպէսզի բանախօսութիւնները նորոգուին

երկու բարձր կողմանց մէջ, կը յուսար, կըսեմք, թէ այս ամէն բաները՝ արժանապէս պիտի հաւկըցուէին, և Ռուսաց արքունիքը ուրիշ աւելի արդարասէր՝ զգացմունք պիտի ունենար թուրքաստանի համար : Բարձրագոյն Պրան այս յոյսը ի դերեւ ելեւով՝ կը ցաւի մեծապէս : քանզի Ռուսաց կայսեր բարձր յատկութիւնները, անոր ծանուցեալ արդարասիրութիւնը և չափաւորութիւնը չեն ներեր օսմանեան կառավարութե հաւատարմութե վեհափառ կայսրը ուղիղ բանի և իրաւունքի հիմունքէն ի դատ ուրիշ հիմանց վրայ հաստատել ուղէ իւր պահանջմունքը : մանաւանդ որ դեռ մօտերս թէ նոյն ինքեան Սուլթանին թէ Եւրոպայի տէրութեանց հաւատարմապահովութիւններ տուաւ թէ կը ցանկայ յարգել և հաստատուն պահել օսմանեան տէրութե արժանաւորութիւնը և անկախութիւնը :

Վրաց վեճակը այսպիսի էր, երբոր Բարձրագոյն Պուռը պաշտօնական կերպիւ ըւր առաւ թէ Ռուսաց զօրքը սահմանագիւղը անցան :

Եւս Ռուսաց կառավարութիւնը Վայնար ճըքի դաշնագրութեան վրայ կուզէ հիմնել իւր պահանջմունքը, (որ է յատուկ պայմանագրութիւն մը տալով իւր ձեռքը՝ հաստատել կրօնական արտօնութիւնները որոց վրայօք է խնդիրը) նշանակութեան արժանի է, թէ այս դաշնագրութեան եօթներորդ յօդուածոյն առաջին մասին մէջ պարունակեալ խոստումը ի մասին պաշտպանութեան քրիստոնէական կրօնին և անոր եկեղեցեացը, ընդհանուր խոստում մըն է, որուն մէջ այն աստիճան զօրութիւն չկրնար տեսնուիլ որ Ռուսաց կառավարութիւնը իրեն կը յատկացնէ, և ոչ մասնաւոր պաշտպանութիւն մը կը տեսնուի Յունաց կրօնին համար միայն :

Որպէս և իցէ այս բանը, եթէ Բարձրագոյն Պուռը պահասութի մը ըրած ըլլար քրիստոնէից կրօնը և եկեղեցիները պաշտպանելու, յայնժամ միայն կը վայելէր յիշեցնել անոր իւր խոստումը : յառաջ բերելով յիշեալ դաշնագրութիւնը Վայնարի է նաև թէ այս նոր պաշտպանութեանը չկրնար հիմնագրութիւն այս դաշնագրութեանը վրայ, վասնզի Յունաց կրօնին արտօնութիւնները և ապահարկութիւնները շնորհուեցան Բարձրագոյն Պուռէն առանց պահանջման միջնորդութեան մէկումը : Աստի իրեն համար պատուոյ խնդիր մըն է հաստատուն պահել զանոնք այժմ և առ յապայ, և պարտք մըն է որ կը ծագի իւր հպատակացը համար ունեցած բարեխնամ կարգաւորութենէն : Ստերս հրատարակուած հրամանագրերը, որոնք կը հաստատեն ամէն կրօնից արտօնութիւնները և ապահարկութիւնները, հրապարակաւ վկայութիւն կու տան Բարձրագոյն Պրան անյողդողդ դիտաւորութեանցը ըստ այսմ մասին : այնպէս որ առանց փոքրագոյն երկբայութեան կը տեսնուի որ օտար միջնորդութիւն մը ամենին հարկաւոր չէ այս բանին համար : Ի վերայ այս ամենայնի, ըստ որում Ռուսաց արքունիքը կասկածներ ունեցաւ այս կրօնական արտօնութեանց վրայօք, որ և իցէ պատճառի համար, և որովհետեւ Յունաց կրօնէն է օգոստափառ կայսրը և իւր հպատակաց մեծագոյն մասը, Բարձրագոյն Պուռը այս խորհրդաւորութիւններէն շարժեալ, նմանապէս ի շնորհս բարեկամական յարաբերութեանց որ տակաւին յոժարաւոր է բաւական ապահովութիւններ տալու ըստ այսմ մասին : Բայց եթէ կառավարութիւն մը մասնաւոր դաշնագրութիւն դնելու րութիւն մը մասնաւոր դաշնագրութիւն դնելու ըլլար ուրիշ կառավարութեանց՝ զորս իւր յոժար իրաւանց և արտօնութեանց և քահանայից այս կամքը շնորհեց եկեղեցեաց և քահանայից այս քան միլիոն աղքատ մը որ իւր իշխանութեան ներքեւ կը գտնուի, ըսել է որ իւր իշխանութիւնը կը բաժնէ նոյն կառավարութեանը հետ, հետեւաբար իւր անկախութիւնը ջնջել ըսել է :

Բարձրագոյն Պրան և Ռուսաց կառավարութեանը մէջ Սոլովիայի և Վալաքիայի իշխանութեանց վրայօք հաստատեալ դաշնագրութիւնները ամենին չեն ներեր որ Ռուսաց կողմ

մանէ զօրք յուղարկուի յիշխանութիւն երկրները . և այս մասին վերաբերեալ յօդուածը , որ Պալատի 1 խմանի «էնկէլս» մէջ կը գտնուի , ստորակարգ հիւսիսէ թէ , եթէ ներքին խռովութիւններ ծագելու ըլլան , ուստի ամենեւին այժմեան պարագային չվերաբերիր :

«Սոյոզը այն է , որ Ռուսաց տէրութեան կողմանէ այս յարձակումը , ըստ սկզբանց իրին առնելով , ուրիշ բան չկիրար համարուիլ բայց միայն պատերազմի հրատարակութիւն , որ անհակառակելի իրաւունք կու տայ Ռարձրագոյն Վրան զինուորական զորութիւնը գործածելու կողմանէ ևս : Բայց օսմանեան կառավարութիւնը չուզէր իւր իրաւունքը մինչև ցփերջին ծայրը մղել . այլ փառահալ ըլլալով ուղղութեանը վրայ , զոր կանոն ըրած է իւր քաղաքական ընթացքին օտար տէրութեանցը հետ , աւելի աղէկ կը համարի նոյն իրաւունքները ուրիշ ժամանակի թողուլ , անհունելով թէ Ռուսաց կառավարութիւնը ինքնայօժար պիտի փոխէ իւր ընթացքը այն պիտի կերպիւ մը , որ աւելի յարմար ըլլայ իւր յայտարարութեանցը : Այս փոփոխութեան սրգելք մը չիտայու նպատակաւ է , որ առայժմ բաւական կը համարի բողբեղընդդէմ յարձակմանը , որուն համար մեծ իրաւունք ունի գանգատելու : Այս կերպիւ Ռարձրագոյն Վուռը կարծէ նորապայտը մը տալ բոլոր աշխարհի իւր չափաւորութեանը՝ զոր ի գործ դրաւ այս խնդրոյն սկիզբէն ի վեր : Թէպէտեւ ամէն կերպ թշնամական գործքերէն կը հեռանայ , բայց կը յայտնէ հրապարակաւ թէ ամենեւին հաճութիւն չունի , որ Ռուսական Վալաքիայի նահանգները որ օսմանեան տէրութեան ամբողջացուցիչ մասունքն են , անտէր տուն մը համարելով , ժամանակ առ ժամանակ զօրք մտցունեն :

«Ռուստի յայտնապէս և կերպապէս (ֆորմէլ ման) կը բողբեղընդդէմ այս գործոյն , և հաստի ըլլալով թէ 1841ին դաշնագրութեան ըստօրագրող տէրութիւնները իրենց հաւանութիւնը պիտի չիտան այս օրինակ յարձակման մը , այժմեան պարագայից օրինակ որ ազդարարութիւնը ըրաւ , և հիմակուհիմն զինուորեալ վիճակի մը մէջ կը կենայ իւր պաշտպանութեանը համար :

«Ի վախճանի Ռարձրագոյն Վուռը կը կրկնէ , թէ օգոստոսիառ Սուլթանը կը ցանկայ միշտ սիրով ընդունիլ Ռուսաց կառավարութեան հիմնաւոր պահանջները , ինչպէս այս բանին համար շատ ապացոյցներ տուած է : Այլև պատրաստ է ուղղել ամէն կերպ զրկանքը ի մասին կրօնական գործոց , որոց դէմ իւր հպատակ յոյները կրնան գանգատուիլ : Վախճանապէս կը կրկնէ թէ հաստացումն եղաւ Սուրբ Տեղեաց գործոց համար , թէ այս խնդիրը որոշեցաւ ըստ հաճութեան Ռուսաց տէրութեան , և թէ Ռարձրագոյն Վուռը չհրաժարիր աւելի բացայայտ ապացոյցներ տալ ի հաստատել զկարգադրութիւնը որ ի գործ դրուեցաւ ամէն կողմանց կանգնողութեամբ :

«Կոստանդնուպօլիս , ի 2-14 Յուլիս 1853 (8 Շէվալ 1269) » :

Ռուսաց կառավարութիւնը շրջաբերական երկրորդ նամակ մըն ալ հրատարակած է Ռեդուպուրիէն յունիսի 20 ամսաթուով : Այս շրջաբերական գրութեամբ , զոր օտար տէրութեանց քով եղած իւր դեմապանացը յուղարկած է , Ռուսիոյ դահլիճը կը գանգատի Նիգղիոյ և Վաղրիոյ դէմ վասն օգնութեանը զոր կը մատուցանեն Ռարձրագոյն Վրան : Ահաւասիկ յիշեալ երկու տէրութեանց վերաբերեալ յօդուածները :

«Սեր վերջաբան խնդիրը բարձրագոյն դրան մատուցանելով , մասնաւորապէս փութացանք մեր գիտաւորութիւնները ծանուցանել իւրօր պայի գլխաւոր տէրութեանց , և յատկապէս թախանձեցինք զՎաղրիան և զՆիգղիան որ իրենց ընթացքով աւելի չնշխովեն պարագայից դժուարութիւնները , և չարտօրան զգուշութեան այնպիսի միջոցներ գործածելու , որ մէկ կողմէն Ռարձրագոյն Վրան ընդդիմութիւնը պիտի քաջալերէին և միւս կողմէն ևս առաւել ծանրութեան ներքեւ պիտի ձգէին Վայսեր պտուիւր և արժանաւորութիւնը , որ տակաւին այն աստիճան

չէր հասած խնդրոյն մէջ : Յաւարի է ինձ ծանուցանել ձեզ , որ այս կրկին ջանքը դժբաղդաբար անօգուտ եղաւ . քանզի Ռարձրագոյն Վուռը , ինչպէս պիտի տեսնէք Ռեշիտ փաշային նամակէն զոր կը յուղարկեմ ձեզ , բացասական կամ փախչողական պատասխան տուաւ իմ գրութեան :

«Սեր կողմանէ երկու ծովային տէրութիւնները արժան չամարեցին զիջանել մեր գիտաւորութեանցը՝ որոց վրայ իրենց ծանր ուշադրութիւն հրաւիրեցինք : Սերգէն առաջ կանխելով , անհրաժեշտ դատեցին անմիջապէս ի գործ դնել այն միջոցները , որոց գործադրութիւնը մենք կը ծանուցանէինք թէ դիպուածական է , և անհրաժեշտ Ռարձրագոյն Վրան վերջին որոշումէն կախեալ է կրտէնը , և այս վայրկեան իսկ , որ կը գրեմ , նոյն միջոցները տակաւին ի գործ դրուած չեն : Բայց յիշեալ տէրութիւնները իրենց նաւատորմիչները անմիջապէս յուղարկեցին Կոստանդնուպօլսոյ ջուրերը , և արդէն Ռարձրանէի մօտ օսմանեան տէրութեան նաւահանգիստները կը գանաւին : Իրենց այս յառաջացեալ ընթացքով , երկու տէրութիւնները սպառնական ցոյցի ծանրութեան ներքեւ դրին զմեզ , որ ինչպէս ծանուցած էինք , նոր չփութութիւններ պիտի պատճառեք առաջիկայ խնդրոյն :

«Տեսնելով բարձրագոյն Վրան մերժումը՝ պաշտպանեալ Վաղրիոյ և Նիգղիոյ բացայայտ ցոյցերէն , անհարկն եղաւ մեզ յայնմհետէ փութիւն զորոշումները՝ որոնք նոյն ցոյցերէն կախուած էին ըստ հրամանի Վայսեր : Ռուստի վեհափառ Վայսըը հրաման յուղարկեց մեր զօրաց խմբին , որ առայժմ Վեսարապիա կը գտնուի , սահմանագրութիւնը անցնիլ և Վանուբեան իշխանութեց մէջ մտնել : Բայց ոչ թէ թշնամական պատերազմ ընելու համար , յորմէ մեր ամէն զօրութեամբ պիտի խորշմը ընդհակառակն՝ քանի որ պիտի չարտաւորեն զմեզ այս բանին , այլ վասնզի Ռարձրագոյն Վուռը մերժելով մեզ՝ բարոյական երաշխաւորութիւնը , զոր իրաւունք ունենիք ստանալու , կը ստիպէ զմեզ՝ անոր փոխարէն , առժամանակեայ նիւթական երաշխաւորութիւն մը ձեռք բերել . քանզի երկու տէրութեանց կացութիւնը օսմանեան տէրութեան նաւահանգստաց մէջ՝ անոր մայրաքաղաքին մօտ , ուրիշ բան չկիրար համարուիլ մեր առջև այս պարագայից մէջ , բայց միայն ծովային զինուորական տիրապետութիւն մը . հետեւեալ իրաւունք կու տայ մեզ փոխադարձ կացութեանց հաւասարաշուքութիւնը կարգադրել , զինուորական դիրք մըն ալ մենք առնելով : Վիտել արժան է սակայն , թէ միտք չունիմք ամենեւին պահել այս դիրքը աւելի ժամանակ , որ չեն պահանջեր մեր պատիւը և մեր ապահովութիւնը : Սեր զօրքը միայն ժամանակ մը պիտի բնակին յիշեալ իշխանութեանց մէջ և իբր առհաւատեցայ պիտի մնան , մինչև որ վեհափառ Սուլթանին պաշտօնեաները աւելի աղէկ խրատներու ականջդնեն : Թէպէտ մեր զօրքը ժամանակ մը պիտի մնան Վանուբեան իշխանութեանց մէջ , սակայն այժմէն կը հրատարակեմք թէ ամենեւին աշխարհակալութեան միտք մը չունիմք , և ամենեւին չեմք պահանջեր մեր երկիրը ընդարձակել : Թէ գիտութեամբ և թէ կամաւ պիտի չաշխատիմք ապրտամբութիւն մը գրգռել (թուրքաստանի քրիստոնէայ ազգաց մէջ , իւր իսկոյն որ բարձրագոյն դուռը պիտի տայ մեզ զհաստացումը զոր կը պահանջեմք , և երբոր երկու տէրութեանց նաւատորմիչները պիտի վերադառնան իրենց երկիրը , յայնժամ մեր զօրքն ևս անմիջապէս Ռուսաստանի սահմանները պիտի մտնեն » :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ , 6 ՅՈՒԼԻՍԻ

Թէպէտեւ քաղաքական գործքերը բարեկամութեն լրմննալու յոյսը օր ըստ օրէ կ'աւելիայ , ըստ որում կը հաստատեն թէ Ռուսաց կառավարութիւնը՝ փոխանակ Վեսարիոյ կառավարութեան միջնորդութեանը , Ռուսիոյ տէրութեան միջնորդութիւնը ընդունել է . ի վերայ այս աւանդի Ռարձրագոյն Վուռը կը շարունակէ միշտ զինուորական պատրաստութիւնները : Վրէ թէ անարկաս չողենաւեր և նաւեր զօրքով բռնաւորեալ՝ կը մեկնին Վառնա երթալու :

Թնդանթածիգ զօրաց տեսուչ բարձրապատիւ Վահտ Սէթհի փաշան անդադար հոգ կը տանի այս գլխաւոր զենքին վրայ , և գրեթէ իւր բոլոր օրերը , և երբեմն գիշերները անգամ թընդանթարանը կ'անցընէ :

«Արիանուպօլսէն կը գրեն , թէ երեք Ռուս լրտեսներ , որոնք Վառնա , Եռմա և Սիւսա գրիա քաղաքները կը շրջեն , ծանցուեցան և բռնուեցան ընդհանուր զբաղեալ Ռոմէր փաշային հրամանաւր : Շարքաքննութիւններ ըլլալով իրենց ներկայութեանը վրայօք այն կողմերը , ըստ տիպուեցան խոստովանելու թէ յուղարկուած էին որ օսմանեան զօրաց շարժումները և կարգադրութիւնները գիտեն : Այս անձինքը անմիջապէս բանտարկուեցան :

ԱՐՏԱՐԻ ԵՒ ՌԻԻՐ

ԱՐԳԱՒԱ . Դնտոն , 8 Յուլիսի ըստ նոր տուածորի : Հասարակաց խորհրդանոցին մէջ հետեւեալ հարցումը եղաւ . Դնտոնի երեսփոխանին .

«Իսին թէ Ռուսաց կառավարութիւնը պաշարած է Վանուբի մուտքը և հետեւեալ 370 նաւ ցորենով բեռնաւորեալ չեն կրնար եղեր նոյն գետէն դուրս ելլելու : Կը ցանկամ գիտնալու թէ արդեօք կառավարութիւնը լուր մը առած է այս դէպքին վրայօք » : Դորտ Դոհն Ռաւսելայսպէս պատասխանեց . « Վաղրիոյ լուր մը չընդունուեցաւ . բայց մեր հիւպատոսներէն մէկէն պաշտօնական նամակ մը եկաւ , որ կը ծանուցանէ թէ Վանուբի մուտքը բնական պատճառներով գոցուած է : Արտաքին գործոց պաշտօնատունը ամենեւին լուր մը չընկալաւ թէ Ռուսիան գոցել տուած ըլլայ Վանուբին մուտքը » :

«Իրե» օրագիրը հետեւեալ յօդուածը կը պարունակէ յուլիսի 8 թուոյն մէջ :

«Այս օրուան գլխաւոր լուրը՝ ետ մնալն է հարցումներուն , որ պիտի ըլլային Նիգղիոյ պաշտօնէից ժողովոյն , լրտեսներու խորհրդանոցին մէջ Վրէնիքէրտ լրտեսն , և պատգամաւորաց խորհրդանոցին մէջ միտքը Էյերտէն » :

«Ինչպէս սովորաբար կ'ըսուի , այսպիսի պարագայից մէջ , Նիգղիոյ բարձրագոյն արգելք չի տալու համար բանախօսութեանց ընթացքին , հրաժարեցաւ բացատրութիւններէն , զորոնք իրաւունք ունէր խնդրելու : Եթէ այս է միայն իրական պատճառը , անշուշտ գոլութեան արժանի է այս մեծ զգուշութիւնը որ կը ծագի խաղաղութեան եռանդէն և գուցէ պաշտօնէից ժողովոյն ներքին երկպառակութիւնը քողարկելու փափագէն : Դորտ Վրէնընտըն , Վրէնպորոք կոմսը , Տէրպի կոմսը , Կրէյ կոմսը , Վրէնիքէրտ մարքէզը մեծ նախանձաւորութեամբ չափաւորութիւն ցուցուցին , և ասոր վախճանը այն եղաւ , որ բանախօսութիւնները պիտի չարգելուին , եթէ բանախօսութիւններ կան , և միանգամայն չի յայտնուեցաւ Նիգղիոյ կառավարութեան որոշումները , որ կատարեալապէս անձանթ են » :

«Ոմանց ըսածին նայելով , որ հաւանական կ'երևի , հարցումներուն ետ մնալուն պատճառը՝ պաշտօնէից ժողովոյն մէջ եղած տարաձայնութիւնն է . որ անշուշտ պիտի վերջանայ լրտես Վաղրիոյն ետ քաղաքելով և լրտես Վրէնիքէրտին յաղթութեամբ » :

«Այս բացատրութիւնը այսօրուան ակմբանոցին մէջ ընդունելի եղաւ ամէնուն : Վերջապէս իրաւ է որ Նիգղիոյ լրտեքաց ընթացքը ամենեւին չի փոխուեցաւ և ամէնքը միաբանութեամբ Ռուսաց Վայսեր դէմ կը խօսին : Վակայն այն ինչ Ռոմիկի-Վոսիլը կը շարունակէ հաստատելու թէ կատարեալ համաձայնութիւն կայ Դնտոնի և Փարիզի կառավարութեանց մէջ : Ռոմիկի-Վոսիլը սաստիկ կը գանգատի ընդդէմ երկմտութեանց Նիգղիոյ պաշտօնէից ժողովոյն » :

ԳԱՂԱՒԱ . Փարիզ , 8 Յուլիսի ըստ նոր տուածորի : Պաշտօնական լրագիր Ռիպլիէր անուն իւր թերթին մէջ որ ի 6 յուլիսի կը ծանուցանէ , թէ Ռուսաց զօրքը յուլիսի 2ին մտան Վանուբեան իշխանութեանց մէջ , և թէ () գերոք իշխանը , որ Ռուսաց Վայսեր անեկապէսն է , Կոստանդնուպօլսոյ յուղարկեցաւ նոր բանախօսութիւններ ընելու համար :